ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՆԱՀԻՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ 2020 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 2021 Թ. ՄԱՐՏ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1) Հավաքագրվել, վերլուծվել և ամփոփվել է ԿԳՄՍ նախարարության ենթակայության 1148. «Արտադպրոցական դաստիարակություն ծրագիր», 1146. «Հանրակրթության ծրագիր» և 1192. «Կրթության որակի ապահովում ծրագիր» ծրագրերով նախատեսված առանձին միջոցառումներ իրականացնող կազմակերպություններից ստացված տեղեկատվությունը, ոլորտում գործող կազմակերպությունների նախնական և փաստացի ցուցանիշները, համադրվել է կնքված պայմանագրերում առկա տվյալների հետ, տվյալներն ամփոփվել և կատարվել է վերահաշվարկ,
2) Ամփոփվել է նախարարության ենթակայության 1148. «Արտադպրոցական դաստիարակություն ծրագիր» ծրագրով նախատեսված առանձին միջոցառումներ և 1146. «Հանրակրթության ծրագիր» ծրագրով նախատեսված 11024. «2022 թվականին ՀՀ-ում կենսաբանության միջազգային օլիմպիադայի նախապատրաստում» միջոցառում իրականացնող կազմակերպություններից ստացված տեղեկատվությունը, կատարվել է հաշվարկ և կազմվել է համապատասխան պայմանագրեր:
3) Կատարվել է վերը նշված ծրագրերի գանձապետական ծախսերի նախահաշիվների, պայմանագրերի քաղվածքների մուտքագրում «CLIENT-TRESURY» համակարգ:
4) Ընդունվել և ներկայացվել է հաստատման համակարգի հաստատությունների տարեսկզբի և տարեկան նախահաշիվները, տարիֆիկացիաները և հաստիքային ցուցակները,
5) Կատարվել է ոլորտի կազմակերպությունների ամսական կամ ընթացիկ ֆինանսավորման հայտերի և հաշվետվությունների վերլուծություն, ֆինանսավորման հայտերի պատրաստում և ներկայացվել է փոխանցման,
6) Վերը նշված ոլորտի կազմակերպություններից և նախարարության համապատասխան ստորաբաժանումներից հավաքագրվել, ուսումնասիրվել և ամփոփվել է բյուջետային և ՄԺԾԾ հայտերը,
7) Մասնակցել է «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «1148. արտադպրոցական դաստիարակության ծրագիր» ծրագրի «11001. արտադպրոցական

դաստիարակություն» միջոցառման շրջանակում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համակարգում գործող կազմակերպությունների միջոցառումների ֆինանսավորման կարգը եվ կնքվող պայմանագրերի օրինակելի ձևը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագծի մշակմանը:

8) Նախարարի համապատասխան հրամանի համաձայն ընդգրկվել է «Արտադպրոցական դաստիարակություն ծրագիր» ծրագրով նախատեսված «Արտադպրոցական դաստիարակություն» միջոցառումների ընտրության նպատակով հանձնաժողովի կազմում: Ուսումնասիրվել է ներկայացված հայտերը, տրվել է կարծիք:
9) Մասնակցել է կրթության, գիտության ոլորտի բյուջետային գործընթացի շրջանակում տարեկան բյուջետային ոչ ֆինանսական չափորոշիչների մշակման աշխատանքների կազմակերպմանը,
10) Մասնակցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված կրթության, գիտության ոլորտի ծրագրերի միջհոդվածային վերաբաշխման հայտերի պատրաստմանը,
11) Մասնակցել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված կրթության, գիտության ոլորտի միջծրագրային վերաբաշխումներ կատարելու Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերի կազմման գործընթացին,
12) Մասնակցել է Նախարարության համակարգում ֆինանսական կառավարման արդյունավետ համակարգերի առկայության, Նախարարության տրամադրության տակ գտնվող ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման վերաբերյալ առաջարկությունների պատրաստմանը:
13) Այլ ընթացիկ աշխատանքներ՝ կազմվել է գրություններ, տրամադրվել է պահանջվող տեղեկատվություն, պատասխանվել է ստացված մի շարք գրությունների:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ՝
ԱՆԱՀԻՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ

06 ապրիլ 2021 թ.